# ՄԱՐԴ, ՈՒՄ ՎԱՍՏԱԿՆ ԱՆՈՒՐԱՆԱԼԻ Է

ISSN 1829-3468

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

ՀԱՍՑԵ՝ ք.ԿԱՊԱՆ, ՇԱՀՈՒՄՅԱՆ 20/32
ՀԵՌԱԽՈՍ՝ (0285) 5 25 63
(091) 45 90 47
(077) 06 28 02

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան,

Արշակունյաց 2: Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 11.02.2015թ.:

ՀԻՆԳՇԱԲԹԻ
12 ՓԵՏՐՎԱՐԻ
2015Թ
№ 4 (347)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

**Աշխարհին խաղաղ օրեր,**
**Լույսերին՝ կրկնություն մաղթեմ,**
**Շռայլ ձեռք մաղթեմ հոգուն,**
**Իսկ մարմնին ճգնություն մաղթեմ:**
**Ամենքին, ամեն մարդու**
**Երդաշեն տքնություն մաղթեմ...**

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ՍՅՅԵՔԱՐՏ

**ԼԱՎՐԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆ**. ծնվել է 1940թ. Սիսիանի շրջանի Վաղատին գյուղում, ավարտել է միջնակարգ դպրոցը, Երեւանի էլեկտրատեխնիկական տեխնիկումը, գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետը:
1960-63թթ. ծառայել է խորհրդային բանակում, այնուհետեւ աշխատանքի անցել Տաթեւիէկի շինարարությունում՝ լաբորանտ, շինվարպետ, աշխղեկ, տեղամասի պետ:
1975 թվականից ղեկավարել է Սիսիանի երկաթբետոնե կառուցվածքների գործարանը, Տաթեւիէկի, ապա՝ Սպանդարյանհէկի շինվարչությունները: Մասնակցել է Սիսիան քաղաքի կենտրոնական կամրջի, հիվանդանոցի կառուցմանը: Նրա ղեկավարությամբ կառուցվել են Տոլորս-Շամբ թունելը, Տոլորսի ջրամբարի ամբարտակը, Շամբհէկը, Սպանդարյանհէկը, Սիսիանի օդանավակայանը, Որոտանի «Ձրային հայելիները», հացատունը, Սիսիան քաղաքում բնակելի բարձրահարկ շենքեր, Հերոսների ջրամբարն ու հէկը: 1992թ. շինվարչությունը կառուցել է ՀՀ պաշտպանության նախարարության մի շարք կարեւորագույն օբյեկտներ եւ բնակելի շենքեր:
1972թ. ընտրվել է Սիսիանի շրջխորհրդի պատգամավոր:
1996թ. ընտրվել է Սիսիանի համայնքի ավագանու անդամ:
1999, 2002, 2005 թվականներին ընտրվել է Սիսիան համայնքի ղեկավար, քաղաքը ղեկավարել մինչեւ 2008-ի նոյեմբեր ամիսը:
2008-2013 թվականներին «Որոտանի հէկերի համակարգ» ՓԲԸ-ում գլխավոր մասնագետ էր: Այնուհետեւ (առայսօր) զբաղվում է այգեգործությամբ:
Արցախյան ազատամարտի ընթացքում ակտիվորեն օժանդակել է ինքնապաշտպանության ելած երկրապահներին:
Պարգեւատրվել է «Ժողովուրդների բարեկամության» (29 ապրիլի 1986թ.), «Վազգեն Սարգսյան», «Մայրական երախտագիտություն» մեդալներով, վերջինս՝ Արցախի ազատագրության պայքարում կատարած հատուկ ծառայությունների համար, «Համո Սահյան» հուշամեդալով, ԽՍՀՄ գերազանցիկ էներգետիկ է:
Ամուսնացած է, ունի չորս զավակ, տասներկու թոռ:
Ոչ մի կուսակցության չի անդամակցում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՀԱՄՈՅԻՆ

## Տարիները ջրի պես հոսել-անցել են, իսկ ինքը մնացել է նույն եռանդաշատը

Լավրենտ Սարգսյան. այսպես կարելի է բնորոշել նրան՝ շինարար, ստեղծարար հայ, եւ զարմանալ, թե մարդ արարածը կյանքի ընթացքում ինչպես կարող է հասցնել այնքան կառուցել եւ այնքան ակտիվ մասնակցել հայրենիքի շենացմանը, որ արժանանա համընդհանուր ճանաչման: Ավելին, հիդրոշինարարի իր աշխատանքով կարողացավ հանրապետությունում առանձնանալ, դառնալ գերազանցիկ էներգետիկ, արժանանալ բազմաթիվ մեդալների ու շքանշանների, պատվոգրերի, բաց ճակատով քայլել անցած եւ նոր ժամանակների միջով ու հավասարապես բարձր գնահատվել ե՛ւ Խորհրդային Հայաստանի, ե՛ւ անկախ Հայաստանի ղեկավարների կողմից:

Իսկ սա արդեն սովորական կենսագրություն եւ պատում չէ, այլ՝ մի ամբողջ կյանք տեւած ստեղծագործական գոհար, որ նույնքան իրական է, որքան Որոտանի զրնգուն կարկաչը, որ հետո ծնունդ պիտի տար Որոտանի հէկերի համակարգին՝ բաղկացած Տաթեւի, Սպանդարյանի եւ Շամբի հէկերից, ինչպես եւ Սիսիանի հայելիներին:

Դժվար է գրել այսպիսի տիրոջ եւ մարդու մասին, ում կյանքը ստեղծագործություն է եղել, նոտագրված կամ վրձնած ստեղծագործություն՝ իր մեծ հայրենակցի հողոտ-մղեղոտ բանաստեղծությունների պես…

Եվ պատահական չի եղել այդ երկու ստեղծարար հոգիների՝ Համո Սահյանի եւ Լավրենտ Սարգսյանի՝ տասնամյակներ տեւած մտերմությունը, ջերմ ու թանկ բարեկամությունը՝ մինչեւ բանաստեղծի վերջին օրերը, մինչեւ նրա երկրային վերջին պահը…

Եվ ահա, Լավրենտ Սարգսյան մարդը, ով, առանց չափազանցության, հիդրոշինարարության բնագավառում հիմա էլ հսկա է, երկար ու ծիգ տարիներ ղեկավարել է Որոտանի հէկերի շինարարությունը, մասնակցել ոչ միայն Սյունիքում, այլեւ մայրաքաղաքում ռազմավարական նշանակության կարեւոր կառույցների շինարարությանը, Սիսիանի իր քաղաքապետության տարիներին (շուրջ տասը տարի) հայրենի քաղաքը դարձրել հանրապետության գեղեցիկ քաղաքներից մեկը, նորանկախ հանրապետությունում ռազմական նշանակության բազմաթիվ շենքեր, սպաների ընտանիքների համար բնակարաններ կառուցել:

Իսկ այս զարմանալի շռայլ հոգու տեր մարդուն իրապես ճանաչելու համար պետք է նախ հանգրվանել իր ծննդավայրում՝ Սիսիանի շրջանի Վա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ՝ ԷՋ 4

Հայրենի եզերք

# Գնահատություն եւ շնորհավորանք

**ՍՈՒՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ**
■ Սյունիքի մարզպետ

Երկար տարիներ է, ինչ ճանաչում եմ Լավրենտ Սարգսյանին հայրենի եզերքի հոգսերով ու ցավերով ապրող մարդու: Նրա հետ առնչվել եմ համատեղ աշխատանքի բերումով, բայց ավելի մոտիկից ճանաչեցի այն ժամանակ, երբ ղեկավարում էր Սիսիանի համայնքը, ինքս՝ Սյունիքի մարզը: Այդ ժամանակվա շփումից բավական էր հանդվել, որ նա ուրույն դիմագիծ եւ քաղաքացիական դիրքորոշում ունեցող պետական եւ հասարակական գործիչներից է:

Խորհրդային տարիներին, երբ Հայաստանում լայն թափով շինարարական աշխատանքներ էին կատարվում, Լավրենտ Սարգսյանը ղեկավարում էր համապետական նշանակություն ունեցող շինարարական կազմակերպությունները՝ կապված Տաթեւէէկի շինարարության հետ, իսկ Տաթեւէկը 20-րդ դարի խոշորագույն կառույցն էր Սյունիքում: Նրա գործունեի ղեկավարությամբ եւ անմիջական մասնակցությամբ մեր երկրամասում կառուցվեցին հիդրոէլեկտրակայաններ, ջրամբարներ, բնակելի շենքեր, սոցիալ-մշակութային օջախներ, սննդի օբյեկտներ, Սիսիանի քաղաքային սմտեսության առանձին ենթակառույցներ, որոնք, որպես մնայուն արժեքներ, այսօր էլ ծառայում են մեր երկրիս ու Ժողովրդին:

Սյունիքի արժանավոր զավակը գործում մասնակցություն է ունեցել Արցախյան ազատամարտին եւ հայ-ադրբեջանական հակամարտության տարիներին նպաստել «Սիսական» փառապանծ ջոկատը (ապա եւ համնում գունդը) նյութական միջոցներով եւ ռազմամթերքով ապահովելու գործին: Առանձնահատուկ արժե ընդգծել Լավրենտ Սարգսյանի դերակատարությունն ու հետեւողականությունը, երբ ռազմական նշանակության օբյեկտներ էր կառուցում նոր-նոր կազմավորվող հայոց բանակի համար:

Որպես Սիսիանի քաղաքապետ՝ Լավրենտ Սարգսյանի գործունեությունն արժանի է գնահատանքի, քանզի նրա պաշտոնավարման օրոք քաղաքը ապրեց բարեկարգման եւ զարգացման ժամանակաշրջան:

Մարդկային փոխհարաբերություններում, առօրյա կյանքում նրա բնավորության գծերից հատկապես կառանձնացնեի անմիջականությունը, կողքիմիս օգնության ձեռք մեկնելու պատրաստակամությունը:

Միաձուլով Լավրենտ Սարգսյանի 75-ամյակին հնչող բարեմաղթանքներին լիահույս եմ, որ նրա եռանդը կբավականացնի, որ միասին կյանքի կոչենք նոր մտահղացումներ:

Ծնունդդ շնորհավոր:

**ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ-ԳՈՒԼԱՆՅԱՆ**
■ Գրող, հրապարակախոս, «Անդիր» ամսագրի գլխավոր խմբագիր

Գարնան վարար ջրերի հետ ամեն տարի անցնում են մեր կյանքի օրերը, ամեն ինչ անցնում է, շատ դեմքեր, դեպքեր ջնջվում են մեր հիշողությունից՝ իրենց տեղում թողնելով խորը դատարկություն…

Այո՛, ամեն ինչ անցնում է, բայց փառք Աստծո, ամեն բան չէ, որ մոռացվում է: Ցիմա գրում եմ այս տողերը, եւ աչքիս առաջ հայտնվում է մեծ Վարպետ Համո Սահյանի պատկերը՝ նրա խոնարհումն իր ծննդավայրի, Լոր գյուղի, Սյունիքի եւ ամբողջ Հայաստանի առջեւ: Հիշելով Վարպետին ամեն անգամ հիշում եմ նաեւ Լավրենտ Սարգսյան անունով մի պայծառ մարդու, ով շինարար էր եւ առաջին հայացքից թվում էր, թե ոչ մի կապ չունի գրականության հետ: Այնինչ, թերեւս, այդպիսի մարդիկ են, որ պահում են գրականությունը՝ կարդալով եւ գրեթե ամբողջությամբ անգիր հիշելով մեծ բանաստեղծի գիրը եւ հարազատ որդու նման հոգ տանելով նրա համար:

Այն տարիներին ես «Գարուն» ամսագրի գլխավոր խմբագիրն էի, երբ Սիսիանում մեծ Վարպետն ինձ ծանոթացրեց Լավրենտ Սարգսյանի հետ: Հետագայում մեզ միացավ նաեւ Վազգեն Սարգսյանը, եւ շատ կարճ ժամանակում Վազգենն ու ես հասկացանք, որ Լավրենտը թերեւս միակ մարդն էր, ում հետ Վարպետը մինչեւ վերջ անկեղծ էր, թեեւ Վարպետը փակ, չբացվող մարդ էր: Իսկ Լավրենտը, ինչպես ասացի, շինարար էր, եւ ինքը ղեկավարեց այդ տարիների բոլոր ռազմավարական կառույցների շինարարությունը: Երբ նա գալիս էր «Գարուն», իսկ նա հաճախ էր այցելում, այդ օրը մեր ամբողջ խմբագրության համար տոն էր: Լավրենտը նշանավոր պատմող էր, իր հանդիպումների, հարաբերությունների մասին կենտկոմի այն ժամանակների ղեկավարների հետ եւ որպես կանոն միշտ մի զավեշտական դրվագ էր ներկայացնում, ու բոլորս համերաշխ ծիծաղում էինք:

Ես գիտեմ, որ նա հիմա էլ, այս տարիքում ասելիք ունի՝ այդ աշխարհ տեսած եւ իր տեսած աշխարհը սիրող մարդը, շատ պատմելու բան ունի մեզ, ինքը պարզապես ընդգիր է. պատմում է այն, ինչ տեսել է:

Եվ այսօր թերեւս այն օրն է, որ մենք՝ նրան ճանաչողներս, աշխարհի հանդեպ իր սերը վերադարձնենք իրեն՝ խնդրելով, որ այն ինչ պատմում էր՝ գրի առնի, քանի որ, ինչպես ասացի, նա մարդ-բնագիր է: Իսկ բնագրերը մեր իրական կյանքն են:

**ԱՂԱՍԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ**
■ Սիսիանի քաղաքապետ

Շնորհավորում եմ Լավրենտ Սարգսյանին՝ ծննդյան 75-ամյակի առթիվ:

Սիսիանի տարածաշրջանում հազիվ թե գտնվի մեկը, ում ծանոթ չէ այդ անունը: Երկարամյա աշխատանքային կենսագրության ընթացքում նա նկատելի հետք է թողել Սիսիանի տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում, ունեցել ուրույն աշխատառճ ու ձեռագիր: Իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու ունակություն, մարդկայնություն, հյուրասիրություն ու բարեհոգություն, կարիքավորի կողքին կանգնելու պատրաստակամություն. սրանք մարդկային այն որակներն են, որոնք բնորոշում են Լավրենտ Սարգսյան մարդուն, անհատին:

Ես չէ, իհարկե, որ պետք է գնահատական տամ տեղական ինքնակառավարման մարմնում՝ Սիսիան համայնքի ղեկավարի պաշտոնում, նրա կատարած աշխատանքին, դրա ամենաճիշտ եւ առաջին գնահատողը ժողովուրդն է, համայնքի անդամը: Այնուամենայնիվ, նա առաջիններից էր, որ տեղական ինքնակառավարման մարմինների հիմնավորման ու կայացման գործի կազմակերպիչը եղավ:

Կրկին շնորհավորելով Լավրենտ Սարգսյանին հոբելյանի առթիվ մաղթում եմ երկարակեցություն եւ առողջություն:



Սահմանում

# ԼԱՎՐԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆ.
# «Համո Սահյանի հետ բարեկամությունը կյանքիս ամենամեծ պարգեւն է»

Համո Սահյան մարդու կերպարը, անհատականությունը, անցած ուղին ամբողջանում են տարբեր մարդկանց հետ շփումները ներկայացնելով, նրանց հուշերը գրի առնելով: Նրա հետ մտերմական կապեր է ունեցել Լավրենտ Սարգսյանը, ով արմատներով Լոր գյուղից է, որտեղից ընտանիքով տեղափոխվել է Վաղատնի, նաեւ կնոջ կողմից բարեկամական կապեր ունի Սահյանի հետ: 1999-2008 թվականներին եղել է Սիսիանի քաղաքապետ, իսկ մինչ այդ աշխատել է Տաթեւէէկի գլխամասային կառուցվածքների շինվարչության պետ: Բացի հիդրոտեխնիկական կառույցներից՝ կատարել է նաեւ քաղաքացիական շինարարություն: Ճարտարապետական հետաքրքրական լուծումներով երկու առանձնատուն է կառուցել Անգեղակոթի ջրամբարի մոտ եւ Վաղատնու Փիրիլուի այգիներում, որտեղ հաճախ իր հանգիստն է անցկացրել բանաստեղծը: Ավելի սերտ հարաբերություններ բանաստեղծի հետ ունեցել է 1988-1992 թվականներին՝ հաճախ նրա հանգիստը կազմակերպել Սիսիանում: Հենց այդ ժամանակ էլ ընկարահանվել են վերջին տեսանյութերը (մասնավորապես, Հովհաննես Պապիկյանի «Իրիկնահացի հրավեր»-ը): Լավրենտ Սարգսյանի՝ համայնքի ղեկավարի պաշտոնավարման օրոք Սիսիանում կանգնեցվել է Համո Սահյանի հուշարձանը (քանդակագործ՝ Գեւտիկ Բաղդասարյան):

Բանաստեղծը նրան գրքեր է նվիրել ընծայագրերով. *«Սիրելի, շատ սիրելի Լավրենտին եւ իր հրաշալի ընտանիքին… Շամքի, Տաթեւի, Սանձատափի անմոռանալի հուշերով… 18.12.86թ.»: Մի այլ գրքի շապիկին հետեւյալ գրությունը կա. «Սիրելի, շատ սիրելի Լավրենտին՝ համագյուղացու, կրկնակի բարեկամու եւ սիսիանյան անփոխարինելի ընկերոջս եւ իր հրաշալի ընտանիքին, 19.09.86թ.»:*

Լավրենտ Սարգսյանի հետ հանդիպեցինք Որոտնավանքին մեծ առանձնատանը, որտեղ բազմիցս իջեւանել եւ հանգիստ է անցկացրել բանաստեղծը: Նրա պատմելով՝ Սահյանի մասին առաջին անգամ լսել է 1954թ., իվ այդ ժամանակ հոդված էր գրել («Ոգու») խմբագրությունում էր աշխատում) Լծեն, Լորի նախագահների մասին (քննադատական հոդված էր): Ամսագիրը բերել էին իրենց տուն, կարդացել, ինքն էլ, տակավին պատանի, իմացել էր, որ բանաստեղծ բարեկամ ուզի: Իսկ անձնական առաջին ծանոթությունը եղել է Երեւանում, 1959թ. Լ. Սարգսյանի բանակ մեկնելուց առաջ: Նրա մայրը եւս Լոր գյուղից էր, իսկ զոքանչն ու Համո Սահյանը զարմիկներ էին: Համո Սահյանի հետ անմիջական կապեր ունեցել է Սիսիանի կուսշրջկոմի նախկին առաջին քարտուղար Կիմ Հովհաննիսյանի շնորհիվ 1970-ականների կեսերին:

Եվ, բնականաբար, առաջինը խոսք բացվեց այդ առանձնատան կառուցման մասին: Ծիրանի այգու առանձնատունը բանաստեղծի մտահղացման արգասիքն է: Այդ մասին սիրով ներկայացրեց զրուցակիցս. *«Մի անգամ Համո Սահյանի, Շչորս Դավթյանի հետ եկա այստեղ, 1984 թվականին էր, մի կտոր հաց էինք ուտում, հորդ անձրեւ սկսվեց: Երբ վազելով նստում էինք ավտոմոբենամ, Սահյանն ասաց, թե՝ Լավրենտ, մի «Պապոնց տունն» ի՞նչ է, որ այստեղ չես կառուցում: Ասի՝ վարպետ, մի անտում մի շենք եմ կառուցելու: Շչորս Դավթյանն էլ ավելացրեց, թե սրբատաշ քարերով չկառուցես, այլ այստեղի ժայռաբեկորներից, գլաքարերից: Շատ կարճ ժամանակում կառուցեցի: Համո Սահյանը հիացած էր այս հրաշք ծիրանի այգիով: Երբ ասում էի՝ վարպետ, գնանք Փիրիլու (տեղանքը, որտեղ գտնվում է առանձնատունը), իսկույն համաձայնում էր: Հաճախակի էին գալիս այստեղ, Սահյանը միշտ շրջապատված էր լինում մտերիմներով, ընկեր-ընկերուհիներով: Մի անգամ Սահյանը մի շաբաթ մնաց այստեղ, ասի՝ վարպետ, ո՞նց ես, ասաց. «Լավրենտ, կյանքս հինգ տարով ավելացրիր»:*

Ցանկանում ենք բացել մեր զրուցակցի հիշատակած «Պապոնց տուն» բառակապակցությունը: Շաղատ գյուղի մոտ կառուցվում էր Որոտանի հէկերից մեկը: Նրան կից բանվորական ավանում կային տեղական բազալտով շինված տնակներ: Նրանցից մեկում հաճախ գիշերում էր բանաստեղծը: Տնակին տվել են «Պապոնց տուն» անվանումը: Հետագայում «Պապոնց տների» թիվն ավելացավ. վերը հիշատակած Վաղատնի գյուղի ծիրանի այգում կառուցված առանձնատունը, ինչպես նաեւ Աշոտավան գյուղից քիչ հեռու գործող ջրհան կայանի փայտաշեն տնակներից մեկը: Եվս երկու «Պապոնց տուն» կար. Շաղատում եւ Դարբասում: Լավրենտ Սարգսյանը մի հուլիկ էլ կառուցել էր տվել Լծենի անտառում, որտեղ լարված առօրյայից հետո սիրում էր հանգիստ առնել բանաստեղծը:

Ավելի ուշագրավ է բանաստեղծի կենդանության օրոք հրատարակված (1986թ.) «Դաղձի ծաղիկ» ժողովածուի վերնագրի ծագման պատմությունը. *«Ավանդույթ էինք դարձրել մի քանի հոգով՝ ես, Համո Սահյանը, Շչորս Դավթյանը, Գրիշա Սարգսյանը (ղրեստի կառավարիչ է եղել) գնում էինք Տատնա հովիտը, որ Լեռնաշենից վերեւ է գտնվում: Այդ այցելությունների ժամանակ Սահյանն իրեն լավ էր զգում: Ուտել-խմելուց հետո լիքը շշերից մեկի վրա բոլորս ստորագրում էինք եւ թաքցնում քարի տակ: Հաջորդ այցելության ժամանակ դա հանում-խմում էինք, տեղը նորը դնում: Հինգ տարի անընդմեջ խոր աշնանը գնացել ենք Տատնա: Մի անգամ պառկած էինք կիսաչոր խոտերի վրա, մեկ էլ հանկարծ Համոն, գյուտ արածի պես, բացականչեց. «Գտա՛, գտա՛»: Փորձեցի կատակի տալ, ասի՝ վարպետ, ի՞նչ գտար, պուլիկը լի ոսկի՞ գտար: Նա էլ թե՝ արա, չէ, գրքիս վերնագիրը գտա՝ «Դաղձի ծաղիկ»: Ուշ աշնանը դաղձը ծաղկել էր, ինչը զարմացրել էր բանաստեղծին, նա ոգեւորվել էր՝ դա դարձնելով իր նոր գրքի վերնագիր: Երբ գարնանը Տատնայով, Լեռնաշենով, Գյադբելով անցնում էինք Տաթեւ, ճանապարհին կակաչների մի դաշտ կար, սիրում էր երկար կանգնել, հիանալ այդ տեսարանով: Սիրում էր նաեւ անընդհատ շրջագայել, լինել Ադրարանում, Իշխանասարում, իսկ Գյադբելը նրա բանաստեղծական ներշնչանքի աղբյուրն էր: Բնության սիրահար էր, այգի էր սիրում, մասրենի, սովորական մի թուփ…»:*

Համո Սահյանը քչախոս էր եւ սակավաբան: Նաեւ զուսպ: Անձնական հարցով ոչ մեկին չէր դիմում, չէր սիրում խնդրել, մանավանդ՝ պահանջել, ընկեր-բարեկամի համար բարխոսել: Լ. Սարգսյանը հարցնում էր. *«Վարպետ, բա սիրտդ մի բան չի՞ ուզում, պատասխանում էր՝ քքուջ արած հավի միս, այսինքն՝ տնական հավ»:* Կուսակցական պաշտոնյաներին չէր սիրում, ձգտում էր քիչ շփումներ ունենալ: Իհարկե, կային այնպիսիք, որոնց անվերապահորեն ընդունում եւ հարգում էր՝ Վլադիմիր Մովսիսյան, Ալեքսան Կիրակոսյան: Երկուսն էլ՝ հարգված կուսակցական-պետական գործիչներ:

Պատահում էր մեկը գալիս խոսում-խոսում էր, իսկ նա մի բառ անգամ չէր արտաբերում: Չէր սիրում հեռուստատեսությամբ խոսք ասել, ընկարահանվել: Մի անգամ՝ ավելի ստույգ՝ 80-ականների վերջին, լրագրող, բանահավաք Հովհաննես Պապիկյանը (այժմ՝ սահմանադրական դատարանի մամուլի քարտուղար) եկել էր Սիսիան՝ տեսաֆիլմ ստեղծելու Համո Սահյանի մասին: Իսկ դա դյուրին գործ չէր՝ Համո Սահյանին համոզելու առումով: Սիսիանի այն ժամանակվա կուսշրջկոմի առաջին քարտուղար Հենզել Առաքելյանն ասել էր. *«Գնացեք, Լավրենտին գտեք, միայն նա կարող է Սահյանին համոզել»:* Այդպես է եղավ, Փիրիլուի այգում ստեղծվեց այդ ֆիլմը, որում Համո Սահյանն է՝ երկրի, երիտասարդության, Արցախյան ազատամարտի, հայ պոետիայի ներկա-

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՋ 8

## ՄՆԱՅՈՒՆ ԳՈՐԾԵՐ՝ ՍՏԵՂԾՎԱԾ ԼԱՎՐԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ

Գործն է ամեն...

# Տարիները ջրի պես հոսել-անցել են, իսկ ինքը մնացել է նույն եռանդաշատը

ՍԿԻԶԲԸ ԷՋ 1

զատիվ գյուղում, որտեղ ապրել են 1828-ին Խոյ-Սալմաստից վերաբնակված (սկզբում վերաբնակվել են Լորում, 1920-ականներից՝ Վաղատիհում) նրա ճախնիները, որտեղ եւ անցել է նրա մանկությունը՝ ծաճկաղ, սայլապան, հնձվոր… Տեղի դպրոցն ավարտելուց հետո՝ երեւանի էլեկտրամեխանիկական տեխնիկում, այնուհետ՝ գյուղատնտեսական ինստիտուտի հիդրոմելիորացիայի ֆակուլտետ… Եվ հայրենի եզեռքում սկսվել է նրա կենսագրությունը, որ արարում է եղել մինչեւ այսօր, երբ որդու՝ Ավետի «Հիդրոշինարար» ՍՊԸ-ի կառույցներում նրա կողքին է՝ խորհրդատու եւ սրտացավ հոր վեհաշուք կերպարով, լի կաուցողի անսպառ ավյունով, դարձյալ հախուռն եւ անհանգիստ, ինչպիսին ճանաչել էինք տարիներ առաջ, տարիներ շարունակ, քանզի տարիներեղ այդ բացառիկ եռանդուն մարդու համար ընդամենն իր կյանքի կոչած ջրերի պես հոսել-անցել են, իսկ իրքը մնացել է նույն եռանդաշատը:

*– Գլխիս վրա տեղ ունեք, բարով եք եկել, բայց չեմ սիրում, երբ լրագրողներն իմ մասին գրելու համար են այցելում… Ամենեք տուն, տրտմեց գրուցենք, ուտենք-խմենք, բայց իմ մասին էլ մի՛ գրեք, խնդրում եմ… Թողեք ես գործ անեմ, ինչ դեռ կարող եմ…*

Եվ դա ասում է հանդգնելու փորձով, զվարթ ծիծաղով, ամաչելով, թվաց՝ խեղճ, բայց նաեւ ըմբոստանալով, իրեն հատուկ եւ հարազատ կերպարից դուրս չգալով:

Լավրենտ Սարգսյանը չէր ուզում, որ ամփոփեինք իր անցած տարիները, չէր ուզում վերջակետի, հիդրոշինարարի, շինարարի վերջճահաշվարկի հանգույց՝ ինքը գրուցելու ու պատմելու, ուզում էր այս ամենը լիներ շարունակության պես, ասես ինքը նստած է Որոտանի կիրճում, ընթացնում է բուռն շինարարություն, ամենուր իրեն կանչում եւ պահանջում են, սպասում, ամենուր կառուցվելիքի ծայնն ու տքնումն է, եւ ինքն էլ… ժամանակ չունի՝ լրագրողների հետ իր մասին գուցե ծեծելու…

**– Ի՞նչ ծրագրեր ունեք, պարո՛ն Սարգսյան:**

Միանգամից մեր դեմ հառնեց ողջ Սայհյանմոր, որ մտահոգել եւ կառուցել է ինքը եւ արդեմ հասցրել ծորը լցնել հազարավոր ծիրանեներնով, դեղձենիներով, մրգատու ծառերով, որպեսզի տարեցսարի ավելացող նրանց քաղցրահամ պտուղներով հյուրասիրի այցելուներին, ընկերներին, սայհյասեսերներին…

Մեծը արդեն Սայհյանի հոբելյանի առիթով հյուրընկալվել էինք այնտեղ, վայելել պտուղները, հաղորդակցվել սայհյանական այդ ինքնատիպ աշխարհին, մեծ քաղաքերգուի քայլած, ապրած վայրերին, շնչել այդ օդը, մաճրակրկիտ ուսումնասիրել բանաստեղծի վավերագրերը:

**– Ամենամեծ ծրագիրս Սայհյանածորը դրախտի վերածելն է…**

Արարողը մնում է արարող, ուր էլ լինի՝ հիդրոշինարարության, քաղաքը ղեկավարելու, թե՝ ծառ տնկելու, բանաստեղծ ընկերոջ հուշի պատառիկները հավաքելու, նրա հիշատակն այսպես հավերժացնելու եւ իր կյանքի իմաստն ու խորհուրդը դրանում տեսնելու մեջ:

**– Գիտեք՝ որտեղ էլ աշխատել եք, հայոց բանակի մեծագույն աջակիցներից մեկն եք եղել…**

*– Գոհ եմ, որ անծանք եմ ճանաչել Սպարապետ Վազգեն Սարգսյանին՝ դեռ 1985-ից, մեզ Մերուժան Տեր-Գուլանյանն էր ծանոթացրել, երբ Համո Սահյանի հետ միասին եկել էին Միսիան: Դուսիից հետո շատ եմ հանդիպել «Գարուն» ամսագրում, երբ այնտեղ աշխատում էր: Այնուհետեւ նրան հանդիպելի շարժման առաջին օրերին, պատերազմի ժամանակ եւ դրանից հետո, երբ Սպարապետը բանակաշինության, զենք ու զինամթերքի ձեռքբերման հարցում լուրջ աջակցության կարիք էր զգում: Գոհ եմ, որ կարողացել եմ իմ հնարավորության սահմաններում օգնել ու աջակցել պատերազմող մեր «Միսական» ջոկատին ու զինվոր եւ շրջանի գյուղերի ինքնապաշտպանական ջոկատներին, որ կառուցել եմ ռազմական նշանակության շենքեր ու շինություններ՝ տարածաշրջանի տարբեր վայրերում: Այդ ժամանակ ով ինչպես, ինչով կարողացել, օգնել է կոլտնտեսներին, նորաստեղծ բանակին. ուրախ եմ, որ ես էլ իմ ներդրումն եմ ունեցել: Դպրոց եմ մեր անկախության, կայացած Ազգային բանակի համար: Դպրոց եմ, որ ճանաչել եմ, առնչվել երկրի շատ ու շատ ղեկավարների հետ, ինչպիսիք են Անդրանիկ Սարգսյանը, երեք նախագահները… Նրանք բոլորը էլ բարձր են գնահատել իմ աշխատանքը: Գոհ եմ այդ ամենից, բայց դժգոհելու շատ պատճառներ էլ ունեմ եւ ընդդրում՝ ճաեւ իմանից: Կարող էինք շատ ավելիով անել, կարող էինք մեր ունեցած հարստությունների հենքով մեծ տնտեսություններ ստեղծել, այսօր մարդիկ շատ ավելի աշխատատեղեր կունենային, լավ կապրեին, չէին արտագաղթ…*

**– Ո՞րն է նոր ժամանակների քաղաքականության մեծագույն սխալը, որ, Ձեր կարծիքով, թույլ տրվեց 91-ից այս կողմ:**

*– Մեծագույն եւ աննեղելի սխալն այն էր, որ նոր իշխանությունները կարծեցին, թե նախկին հասարակարգում սրբորեն աշխատած եւ երկիր կառուցած մարդիկ անկախ հանրապետության թշնամիներն են, եւ սկսեցին աջ ու ձախ ուրանալ նրանց աշխատանքը, հեռացնել աշխատանքից, փակեցին հարյուրավոր հինմարդ-մեծանարկությունները, փոշիացին երկրի ու ժողովրդի հարստությունը: Ուշացումով, բայց դարձյալ ոչ ամենուրեք, գիտակցեցին իրենց սխալը, բայց շատերն արդեն երկրում չէին, արտագաղթել էին, ոմանց էլ չվերադարձրին՝ պատճառաբանելով, թե կենսաթոշակային տարիքի են, իսկ վերադարձողները շատ քիչ էին:*

**– Եվ հավանաբար, 1999 թվականին՝ գրեթե 60 տարեկանում, Սիսիանի քաղաքապետ Ձեր ընտրվելն էլ կարելի է հավատալ բարի պատահականությո՞ւն: Չէ՞ որ ոչ բոլոր քաղաքների բախտն է բերել փորձառու, մեծ ճանապարհ անցած, կառուցող քաղաքապետ ունենալու հարցում:**

*– Գուցե Դուք ճիշտ եք, չգիտեմ, բայց կարծում եմ՝ եթե հայրենի քաղաքիս ու ժողովրդիս բախտը բերել է իմ հարցում, ապա իմ բախտը հազարապատիկ է բերել: Չէ՞ որ ես երազում էի բարօրություն իմ ժողովրդի համար, դեռ շատ երազանքներ ու ցանկություններ ունեի՝ հայրենի քաղաքս ծաղկեցնելու, բարեկարգելու հարցում:*

**– Ո՞րն է եղել կատարած առաջին գործը քաղաքապետ դառնալուց հետո, եւ ի՞նչ հիշարժան գործ եք կատարել, որ շատերը գուցե չկարողանային անել:**

*– Շեմ խոսի քաղաքի կանաչապատման, ասֆալտապատման, ոռոգման եւ խմելու ջրագծերի կառուցման ու վերանորոգման, դրանց շահագործման, մուտքմանկապատեզերների վերանորոգման, մշակույթի պալատի վերակառուցման, տասնյակ ընտանիքների հարմարավետ բնակարաններով ապահովման եւ այլնի մասին:*

*Առաջին եւ ամենադժվար գործը, որ արեցի, կուտակված պարտքերի մարումն էր: Քաղաքապետարանը խրված էր պարտքերի մեջ 67 միլիոն դրամ, երբ ստանձնեցի քաղաքապետի պաշտոնը:*

*Քաղաքապետարանի բյուջեն կազմում էր 45 մլն դրամ, երեք տարում պարտքերը փակեցի, որից հետո բյուջեն հասցրի մինչեւ 200 մլն դրամի, իսկ երբ պաշտոնը հանձնում էի՝ ինը տարի անց, բյուջեն արդեն 270 մլն դրամ էր: Սա համարում եմ շատ փաղանց հիշարժան եւ տքնաքան, գրեթե անհավատալի գործ… Այսօր քաղաքապետարանի բյուջեն 330 մլն դրամ է, վատ չէ, առաջխաղացման հիմքը դրված է, եւ կարծես թե ավանդույթը շարունակվում է:*

*Բայց իմ հոգու ամենամեծ հանգստությունն ու հոգուս նվիրական պարտքի մարումը 2004թ. քաղաքի կենտրոնում Համո Սահյանի հուշարձանի տեղադրման նախաձեռնությունն էր, որն ի վերջո իրականություն դարձրի եւ հազարավոր հայրենակիցներիս հնարավորություն տվեցի հիանալ ու հպարտանալ դրանով, առիթ-անառիթ բանաստեղծի հուշակոթողին ծաղիկներ, ծաղկեպսակներ դնել եւ դարձնել մի յուրօրինակ ադրբատեղի:*

**– Ինչպե՞ս սկիզբ դրեցիք Սիսիան-Նեա Ձմիրնի բարեկամությանը, որ մինչեւ հիմա շարունակվում է:**

*– 2001 թվականին էր դա, նախ այնտեղ բնակվող իմ ծանոթ-բարեկամների միջոցով առնչություններ ունեցա: Դրանից հետո Սիսիանի քաղաքապետարանը պաշտոնական հրավեր ստացավ, եւ հինգ հոգով մեկնեցինք Հունաստան, բարեկամության ու համագործակցության պայմանագիր ստորագրելու: Այնուհետեւ նրանց պատվիրակությունը ժամանեց Միսիան՝ իր հետ բերելով մոտ 100 հազար դոլարի գույք: Հատկապես ակտիվ էին մշակութային կապերը. Միսիանի պարի համույթը (20 հոգուց բաղկացած) երեք անգամ այցելեց Սթենքին հարակից այդ բաղաքը, ելույթներ ունեցավ:*

*Մինչեւ հիմա էլ այդ բարեկամությունը շարունակվում է:*

**– Տասնամյակներով շինարարական կազմակերպություն ղեկավարած Լավրենտ Սարգսյանը Սիսիանի քաղաքապետի պաշտոնում որքանո՞վ կարողացավ ուշադրություն դարձնել հանամյքի կրթական, մշակութային, մարզական գործերին: Տարիների հեռվից կարո՞ղ ես ուշագրավ ինչ-որ բան հիշել այդ առումով:**

*– Սիսիանը Շահասի հռչակավոր վարդապետարանի բնօրանն է, որտեղ հայոց դպրոց է հիմնել մեր սրբազուտը Մեսրոպ Մաշտոցը: Սիսիանը մեր ժողովրդի մի քանի երեւելի զավակների բնօրանն է՝ Սուրբ Հովհան Որոտնեցի, Նիկողայոս Ադոնց, Համո Սահյան… Այդ հանգամանքները մեզ պարտավորեցնում էին, որ ուշադրության կենտրոնում պահենք կրթական, հոգեւոր-մշակութային կյանքը:*

*Թիչ առաջ խոսում էինք հուսների հետ բարեկամության մասին, ինչը, նախեւառաջ, մշակութային երեւույթ է:*

*Տեղյակ եք Համո Սահյանի հուշարձանի կառուցման մանրամասներին. դա էլ առիթ եղավ, որպեսզի հիմնանորոգենք ու ակնահաճո տեսքի բերենք Սիսակ Նահապետի անվան հրապարակը:*

*Իմ աշխատանքի ընթացքում երեք մանկապարտեզ եմ հիմնանորոգել, ինչպես եւ քաղաքի մշակույթի կենտրոնը (այդ թվում՝ գրադարանը):*

*Սիսիանի պարի համույթն այդ տարիներին հասավ իր հեղինակության բարձրակետին:*

*Սիսիանի կանանց վոլեյբոլի թիմը, հավանաբար տեղյակ եք, այդ տարիներին քանիցս դարձավ հանրապետության չեմպիոն:*

**– Ի՞նչ բացթողում կա այսօր Սիսիան քաղաքում, որ կշտկեիք առաջին իսկ հնարավորության դեպքում, եթե նորից վերընտրվեիք…**

*– Նախ ասեմ՝ չեմ ուզում վերընտրվել եւ չեմ էլ առաջադրվի: Ոգիս ու ավյունս տեղն են, բայց ինչ կարող ես անել, մի քանի անգամ միրահատվել եմ, եւ բժիշկներն արգելել են ծանրաբեռնվել… Ընտանիքիս անդամներն էլ այդ հարցում նրանց հետ համամիտ են (ծիծաղում է): Բայց ասեմ, որ 2008 թվականին առաջադրվեցի եմ ժողովրդի եւ բարձրագույն իշխանությունների կողմից՝ չորրորդ անգամ ընտրությանը մասնակցելու, հրաժարվել եմ: Դա չի նշանակում, իհարկե, թե չեմ ապրում քաղաքիս հոգսերով: Առաջին գործը, որ այսօր կաեեի, դարձյալ քաղաքիս բարեկարգումն է. կշարունակեի բարեկարգել, կանաչապատել, ասֆալտապատել Սիսիանը եւ էլի այն դարձնել հանրապետության գեղեցիկ ու մաքուր քաղաքներից մեկը:*

*Այսպես էլ շնորհակալ եմ Աստծուց. կարողանում եմ մեցուկ լինել իմ ժողովրդին, հետաքրքրվել պետական խնդիրներով, հաճախ էլ մասնակցել դրանց լուծմանը, խորհուրդներ տալ՝ տասնամյակների իմ փորձից ելնելով:*

**– Ո՞րն է գաղտնիքը, որ ե՛ւ նախկին, ե՛ւ ներկա ղեկավարները հավասարապես նկատել ու գնահատել են Ձեզ, երկու դեպքում էլ շարունակեք եք մնալ սպասված, մեծարված անձ:**

*– Այնպես չէ, որ ընդդիմախոսներ չեմ ունեցել: Ուղղակի ինձ համար կարեւորը եղել է գործս ազնվորեն կատարելը: Բոլոր մարդկային հարաբերություններում գնահատում եմ ազնվությունը եւ աշխատանքի անմնացորդ նվիրվելը: Սա չգիտեմ՝ գե՞ն է, դաստիարակությո՞ւն է, խորհրդային մեր սերնդին ընդորոշ հատկանի՞շ է, թե՞ մեկ այլ բան: Ցանայաս ոչ մեկիմ չի հաջողվել լրջորեն վնասել ինձ, ճանապարհիս քար դնել… Հիշում եմ միայն մեկ դեպք, երբ Վազգեն Սարգսյանին փորձել էին տրամադրել իմ դեմ՝ ասելով, որ բանակին հանձնված շենքերից մեկը վերանորոգված է: Փառք Աստծո, սուտը պարզվեց հենց տեղում, երբ Սպարապետն այցելեց շենք եւ իր աչքով տեսավ աթեթի կատարված աշխատանքը:*

*Իմ՝ վերաբերում է մեծարանքին ու պատվին, որին արժանացել եմ եւ Սնոտ Քոչինյանը, եւ կարեմ Դեմիրճյանը, նրանց գուգահեռ եւ նրանցից հետո՝ էլի շատերը, միաժամանակ՝ նորանկախ երկրի երեք նախագահը, ասեմ, որ այստեղ գաղտնիք չկա, մարդիկ տեսել ու գնահատել են: Գուցե մի քիչ էլ բախտավոր աստղի տակ եմ ծնվել, չգիտեմ:*

**– Ճի՞շտ է, որ տասնմայակներ շարունակ հարմարավետ բնակարաններով ապահովելով հարյուրավոր ընտանիքների՝ Ձեր ընտանիքով բնակվել եք ընդհանուր կոմունալ հարմարություններով բնակարանում:**

*– Այո, եւ չեմ ոգդոհել: Պատուհանից նայեք. դիմացի շենքի առաջին հարկի բնակարանում տարիներ շարունակ ապրել ենք, չորս երեխաս ծոխությունս եւ հարմարավետ բնակարաններ չեմ տեսել, բայց բոլորն էլ ուսման գերազանցիկներ են եղել, եւ չեմ էլ իմացել, թե երբ են ընդունվել բուհ եւ երբ ավարտել:*

**– Այդ դեպքում ո՞վ է զբաղվել նրանց դաստիարակությամբ, որ այսօր յուրաքանչյուրն իր տեղում կայացած մասնագետ եւ լավ մարդ է, հայրենասեր քաղաքացի:**

*– Գիտե՞ք, այսպիսի մի խոսք կա. երեխան տեսնելով է սովորում: Մեր ընտանիքում հիմնականում կինս է զբաղվել երեխաների ուսման եւ դաստիարակության հարցերով: Ես լիովին վստահել եմ նրան: Նա տնտեսագետ է, մի քանի տարի աշխատել է իր մասնագիտությամբ, հետո ամբողջով ընտանիքիս, երեխաներիս: Այդպես էլ պետք է լիներ՝ մեծ ընտանիք, հոգսեր, ամեն օր թաքնվածիկ հյուրեր: Այդ տանը ես հյուրընկալել եմ նաեւ Կարեն Դեմիրճյանին, շատ ու շատ պատվավոր հյուրերի: Այդ տանն են հյուրընկալվել գրողներ, կոմպոզիտորներ, գեղանկարիչներ՝ Վահագն Դավթյանը, Տիգրան Մանսուրյանը, Հակոբ Հակոբյանը… Համո Սահյանին չեմ ասում, որովհետեւ նա երբեք հյուր չի եղել, նա իմ տան ամենաթանկ եւ պատվավոր անդամն էր: Ասեմ, որ Համո Սահյանի հետ ոչ միայն մտերիմ ընկերներ էինք, նաեւ բարեկամություն կար. գոքանչիս հայրը եւ բանաստեղծի հայրը հարազատ եղբայրներ էին (Գրիգորյաններ):*

*Հենց այդ տարիներին Որոտնավանքի շրջակայքում հողամաս վերցնելով՝ կառուցեցի բնակարան-թանգարանի պես ինքնատիպ մի բան, որտեղ ամեն առիթով հյուրընկալվում եւ գիշերում էին բանաստեղծը, իր ընկերները, մեր երախտավորներից շատերը… Չորս էլ կոչեցի Սահյանածոր: Մտածում եմ այդ կառույցը հետագայում վերածել Համո Սահյանի մեկ այլ որակի թանգարանի, որտեղ բանաստեղծն ավելի շատ է եղել, քան Լորի իր նորակառույց տանը, որն այսօր տուն-թանգարան է: Շատ-շատ նյութեր ունեմ բանաստեղծին առնչվող լուսանկարներ, տեսագրություններ-ձայնագրություններ, մահճակալը, որի վրա քնել է, ծոմաթոռը, որտեղ սիրում էր նստել, տան ամեն անկյունը, նրա իրերը, բաժակն ու ափսեները… Ի վերջո, ողջ այգին, որտեղ բազմիցս շրջել է Սահյանը, եւ որի ամեն մի ծառը մի պատմություն է նրա մասին: Հետագայում ավելացրել եմ էլի հարյուրավոր ծառեր, եւ բոլոր տնկիներն էլ նրա հիշատակին են:*

*Սահյասարպ, ծառ տնկելն աստվածահաճո գործ է: Երկրորդ նախագահիմ՝ Ռոբերտ Քոչարյանին, երբ 2003-ին այցելել էր Սիսիան, «Կանթեղ» հանգստյան գոտում ծիրանենու տնկի տվեցինք եւ առաջարկեցինք տնկել: Զարմացել էր. ինչո՞ւ հանկարծ նրան ծառ տնկելու առաջարկություն արեցինք: Բահը վերցնելով՝ ճախագանգ սկսեց փորել հողը եւ նույնիսկ կատակեց. «Լավրենտ, մի կողոպ հաց ես տվել եւ, գիտեմ, տեղը պիտի հանես…»: Ծառը տնկելուց հետո ցրեց եւ հետագայում էլ ամեն անգամ, երբ հանդիպում էի, հարցնում էր՝ Լավրենտ, ծառն ածո՞ւմ է:*

*Ծառը ոչ միայն ածում էր, այլեւ մի քանի տարի անց լավ բերք տվեց: Երեւան մեկնելիս հավաքեցի ծառի առաջին առատ բերքը եւ տարա Քոչարյանին տվեցի: Հիացմունքից եւ ուրախությունից բառ չէր գտնում ասելու…*

*Այդպես է, եթե սիրով ես գործդ անում, անպայման պտուղ է տալիս: Ծառն էլ է այդպիսին, նա ամեն ինչ զգում է՝ եւ սերդ, եւ չարությունդ:*

**– Նշանավոր մարդիկ (պետական ու քաղաքական, հոգեւոր-մշակութային գործիչներ), որոնց հետ շփվել եւ գործ եք ունեցել… Ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը կյանքում, շինարարության մեջ, կառավարման ուրտոնում, մարդկային հարաբերություններում:**

*– Շփվել եմ գրեթե բոլոր ղեկավարների (հանրապետության մասշտաբով) եւ հոգեւոր-մշակութային գործիչների հետ, ովքեր վերջին երեք-չորս տասնամյակում այցելել են Սիսիան: Ուշագրավ հանդիպումներ եմ ունեցել, օրինակ, լուսահոգի Կարեն Դեմիրճյանի հետ: Մի քանի անգամ նա այցելել է Որոտանի կառուցվող հէկեր, ջրամբարներ, մանրամասնորեն հետաքրքրվել շինարարության որակով:*

*Երկար տարիներ աշխատել եմ կիմ Հովհաննիսյանի, Հշչոյս Դավթյանի ղեկավարությամբ. նրանք էին այդ տարիներին ղեկավարում Սիսիանի շրջանը: Նրանցից սովորելու, նրանց ընտրությունները լսում առիթներս են եղել:*

**– Մարդկանց հետ հարաբերություններում, որքանով տեղյակ եք, Դուք անմիջական եք, դժվարություններ եք ցուցաբերում, կանխակալությունը չեք ցուցաբերում, հիշաչար չեք: Բայց վերջին պաշտոնաթողությունից հետո, նաեւ Ձեր ընտրությունների ժամանակ, երբեմնի գործընկերներդ հեռացան քեզանից, ինչն անկասկած չմնաց հանրության աչքից…**

*– Դուք ճիշտ նկատեցիք՝ հիշաչարությունը ինձ հարիր չէ: Սիսիանը նաեւ իսկ կառուցած քաղաքն է, մոտ տասը տարի ես եմ առաջնորդել սիսիանցուն, Սիսիանն իմ բնօրանն է: Եվ ուրեմն՝ ես չեմ կարող որեւէ մեկից նեղացած լինել, որեւէ մեկից խույս տալ, թեեւ հատուկենետ մարդուց պահվածքն իմ հանդեպ հնարավոր չէ բարոյական համարել:*

**– Ամենամնայուն գործերը, որ արել եք ու թողել գալիք սերունդներին:**

*– Չեմ կարող հպարտանալ չապրել այնպիսի գործերի համար, ինչպիսիք են Սիսիանի ջրային հայելիները, օդակայանը, հացի թանգարանը, Շամբի, Տոլորսի, Սպանդարյանի ջրամբարները, Շամբիկլը, Սպանդարյանձորը, Սիսիանի բազմաբնակարան շենքերը…*

**– Սիսիանի հիմնախնդիրներն այսօր… կամ՝ ի՞նչ է պակասում Սիսիանին այսօր. մոտ տասը տարի եղել եք այդ համայնքի ղեկավարը, եւ, անշուշտ, Ձեզ ավելի տեսանելի են դրանք, քան որեւէ մեկին:**

*– Ամենակարեւորը զբաղվածության խնդիրն է. մեր երիտասարդներն իրենց վաղվա օրը պետք է տեսնեն Սիսիանում:*

*Ներքաղաքային տնտեսության վիճակն էլ մտահոգիչ է՝ փողոցներ, առբահանություն…*

*Մարդկային նորմալ փոխհարաբերություններն էլ մեզ համար թանկ պիտի լիներ: Կուսակցությունների միջեւ պայքարը, որ բնական է, երբեք չպետք է խաթարի այդ հարաբերությունները, սիսիանցիների միասնությունը: Հատկապես համայնքային հիմնախնդիրների լուծման հարցում պետք է միասնական լինենք, որպեսզի Սիսիանի ձայնը լսելի լինի:*

**– Ձեր կյանքի դժվարին պահերից մեկը…**

*– Դժվարին իրավիճակներում շատ եմ հայտնվել, բայց կա մի դրվագ, որ հնարավոր չէ մոռանալ…*

*1987թ. մայիսի 20-ին (այդ ժամանակ Սպանդարյանի շինկարգության պետն էի) Սպանդարյանի թունելը փակել էինք, որ ջրամբարը ջուր լցնենք: Անձրեւոտ օրեր էին, ջուրը շատ արագ բարձրացավ (20 օրում ջրամբարը լցվեց մոտ 60 մլն խորաքառ մետր ջուր), հենց այդ ժամանակ թունելի խցանային փակմունէ խնդիրը առաջացավ: Ամենահատեսելի վիճակ էր մեզ համար: Բարեբախտաբար, որպեսզի առաջ էինք թունելից բանվորներին հանել եւ ոչ մի գոհ չունեցանք: Մեզ հաջողեց տեղի ունեցածի պատճառը գտնել եւ վերացնել…*

*Բայց շատերը սկզբնապես կարծում էին, թե ջրամբարի պատնեշն է վնասվել, ճաք տվել: Իրար էին խառնվել ոչ միայն Հայաստանի կոմկուսի կենտկոմում եւ Հայաստանի կառավարությունում, այլեւ Մոսկվայում, որտեղից հանձնաժողով ժամանեց Սիսիան: Խուճապ էր առաջացել Սիսիանում, ոմանք ասելոսեերի հիման վրա քաղաքի ափամերձ թաղամասերից բնակչությունը տարիանալու խնդիր էին դրել… Մինչդեռ, եթե նույնիսկ պատնեշը ճաք տար կամ քանդվեր, միեւնույն է, Սիսիան քաղաքին վնաս չէր լինի (հանձնաժողովն էր նման եզրակացության հանգել, ջրամբարում դեռեւս այդքան ջուր չէր կուտակվել):*

*Այդ մեկ շաբաթը, իսկապես, իմ կյանքի ամենալարված, ամենադժվար պահն էր:*

**– Ի դեպ, Դուք գլխավորել եք Սպանդարյանի, Շամբի եւ Տոլորսի ջրամբարների կառուցումը: Կա մի հարց, որ, հատկապես Սպիտակի երկրաշարժից հետո, հրատապ է ու արդիական առայսօր: Նկատի ունենք այդ ջրամբարների սեյսմակայունությունը: Մարդիկ դեռեւս հիշում են այդ ջրամբարներում տեղի ունեցած վթարները, որոնց հետեւանքով Որոտանի կիրճը մեծ վնասներ կրեց: Իհարկե, այդ վթարները պայմանավորված չէին անբավարար սեյսմակայունությամբ, բայց եւ տեսանք, թե ինչ կարող է լինել որեւէ ջրամբարի պատնեշի կամ բուսեւի վթարից:**

*– Ժամանակին այդ ջրամբարները կառուցվել են ինը բալ երկրաշարժին դիմանալու ամրությամբ: Տարիների ընթացքում, բնականաբար, պատնեշներն ավելի եմ ամրացել եւ հիմա բավականին հուսալի են:*

*Ինչ վերաբերում է Շամբի, Տոլորսի վթարներին (Սպանդարյանի վթարի մասին արդեն խոսեցինք), ապա դրանք եւս ոչ թե պատնեշի թուլությամբ էին պայմանավորված, այլ ժամանակավոր կառույցներում տեղ գտած թերություններով: Այնպես որ, մեր երեք ջրամբարն էլ հուսալիորեն ամուր են:*

**– Ամենամեծ արժեքը, ամենամեծ հարստությունը (եթե կարելի է այդպես ասել), որ ձեռք եք բերել կյանքի 75 տարում:**

*– Ամենամեծ արժեքն ու ամենամեծ հարստությունն ընտանիքս է, երեխաներս են (Ավետ, Հասմիկ, Արմինե, Արթուր), տաներկու թոռներս են…*

*Ընտանիքս ընտանիքը մեր ազգի հարատեւության գլխավոր երաշխիքներից է, մենք ազգովի պետք է այնպես անենք, որ ունենանք ամուր ընտանիք, որ հաղորդակցվում եւ գիշերում էին բանաստեղծը, իր ընկերները, մեր երախտավորներից շատերը… Չորս էլ կոչեցի Սահյանածոր: Մտածում եմ այդ կառույցը հետագայում վերածել Համո Սահյանի մեկ այլ որակի թանգարանի, որտեղ բանաստեղծն ավելի շատ է եղել, քան Լորի իր նորակառույց տանը, որն այսօր տուն-թանգարան է: Շատ-շատ նյութեր ունեմ բանաստեղծին առնչվող լուսանկարներ, տեսագրություններ-ձայնագրություններ, մահճակալը, որի վրա քնել է, ծոմաթոռը, որտեղ սիրում էր նստել, տան ամեն անկյունը, նրա իրերը, բաժակն ու ափսեները… Ի վերջո, ողջ այգին, որտեղ բազմիցս շրջել է Սահյանը, եւ որի ամեն մի ծառը մի պատմություն է նրա մասին: Հետագայում ավելացրել եմ էլի հարյուրավոր ծառեր, եւ բոլոր տնկիներն էլ նրա հիշատակին են:*

*Սահյասարպ, ծառ տնկելն աստվածահաճո գործ է: Երկրորդ նախագահիմ՝ Ռոբերտ Քոչարյանին, երբ 2003-ին այցելել էր Սիսիան, «Կանթեղ» հանգստյան գոտում ծիրանենու տնկի տվեցինք եւ առաջարկեցինք տնկել: Զարմացել էր. ինչո՞ւ հանկարծ նրան ծառ տնկելու առաջարկություն արեցինք: Բահը վերցնելով՝ ճախագանգ սկսեց փորել հողը եւ նույնիսկ կատակեց. «Լավրենտ, մի կողոպ հաց ես տվել եւ, գիտեմ, տեղը պիտի հանես…»: Ծառը տնկելուց հետո ցրեց եւ հետագայում էլ ամեն անգամ, երբ հանդիպում էի, հարցնում էր՝ Լավրենտ, ծառն ածո՞ւմ է:*

*Ծառը ոչ միայն ածում էր, այլեւ մի քանի տարի անց լավ բերք տվեց: Երեւան մեկնելիս հավաքեցի ծառի առաջին առատ բերքը եւ տարա Քոչարյանին տվեցի: Հիացմունքից եւ ուրախությունից բառ չէր գտնում ասելու…*

*Այդպես է, եթե սիրով ես գործդ անում, անպայման պտուղ է տալիս: Ծառն էլ է այդպիսին, նա ամեն ինչ զգում է՝ եւ սերդ, եւ չարությունդ:*

**– Նշանավոր մարդիկ (պետական ու քաղաքական, հոգեւոր-մշակութային գործիչներ), որոնց հետ շփվել եւ գործ եք ունեցել… Ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը կյանքում, շինարարության մեջ, կառավարման ուրտոնում, մարդկային հարաբերություններում:**

*– Շփվել եմ գրեթե բոլոր ղեկավարների (հանրապետության մասշտաբով) եւ հոգեւոր-մշակութային գործիչների հետ, ովքեր վերջին երեք-չորս տասնամյակում այցելել են Սիսիան: Ուշագրավ հանդիպումներ եմ ունեցել, օրինակ, լուսահոգի Կարեն Դեմիրճյանի հետ: Մի քանի անգամ նա այցելել է Որոտանի կառուցվող հէկեր, ջրամբարներ, մանրամասնորեն հետաքրքրվել շինարարության որակով:*

*Երկար տարիներ աշխատել եմ կիմ Հովհաննիսյանի, Հշչոյս Դավթյանի ղեկավարությամբ. նրանք էին այդ տարիներին ղեկավարում Սիսիանի շրջանը: Նրանցից սովորելու, նրանց ընտրությունները լսում առիթներս են եղել:*

**– Մարդկանց հետ հարաբերություններում, որքանով տեղյակ եք, Դուք անմիջական եք, դժվարություններ եք ցուցաբերում, կանխակալությունը չեք ցուցաբերում, հիշաչար չեք: Բայց վերջին պաշտոնաթողությունից հետո, նաեւ Ձեր ընտրությունների ժամանակ, երբեմնի գործընկերներդ հեռացան քեզանից, ինչն անկասկած չմնաց հանրության աչքից…**

*– Դուք ճիշտ նկատեցիք՝ հիշաչարությունը ինձ հարիր չէ: Սիսիանը նաեւ իսկ կառուցած քաղաքն է, մոտ տասը տարի ես եմ առաջնորդել սիսիանցուն, Սիսիանն իմ բնօրանն է: Եվ ուրեմն՝ ես չեմ կարող որեւէ մեկից նեղացած լինել, որեւէ մեկից խույս տալ, թեեւ հատուկենետ մարդուց պահվածքն իմ հանդեպ հնարավոր չէ բարոյական համարել:*

**– Ամենամնայուն գործերը, որ արել եք ու թողել գալիք սերունդներին:**

*– Չեմ կարող հպարտանալ չապրել այնպիսի գործերի համար, ինչպիսիք են Սիսիանի ջրային հայելիները, օդակայանը, հացի թանգարանը, Շամբի, Տոլորսի, Սպանդարյանի ջրամբարները, Շամբիկլը, Սպանդարյանձորը, Սիսիանի բազմաբնակարան շենքերը…*

**– Սիսիանի հիմնախնդիրներն այսօր… կամ՝ ի՞նչ է պակասում Սիսիանին այսօր. մոտ տասը տարի եղել եք այդ համայնքի ղեկավարը, եւ, անշուշտ, Ձեզ ավելի տեսանելի են դրանք, քան որեւէ մեկին:**

*– Ամենակարեւորը զբաղվածության խնդիրն է. մեր երիտասարդներն իրենց վաղվա օրը պետք է տեսնեն Սիսիանում:*

*Ներքաղաքային տնտեսության վիճակն էլ մտահոգիչ է՝ փողոցներ, առբահանություն…*

*Մարդկային նորմալ փոխհարաբերություններն էլ մեզ համար թանկ պիտի լիներ: Կուսակցությունների միջեւ պայքարը, որ բնական է, երբեք չպետք է խաթարի այդ հարաբերությունները, սիսիանցիների միասնությունը: Հատկապես համայնքային հիմնախնդիրների լուծման հարցում պետք է միասնական լինենք, որպեսզի Սիսիանի ձայնը լսելի լինի:*

**– Ձեր կյանքի դժվարին պահերից մեկը…**

*– Դժվարին իրավիճակներում շատ եմ հայտնվել, բայց կա մի դրվագ, որ հնարավոր չէ մոռանալ…*

*1987թ. մայիսի 20-ին (այդ ժամանակ Սպանդարյանի շինկարգության պետն էի) Սպանդարյանի թունելը փակել էինք, որ ջրամբարը ջուր լցնենք: Անձրեւոտ օրեր էին, ջուրը շատ արագ բարձրացավ (20 օրում ջրամբարը լցվեց մոտ 60 մլն խորաքառ մետր ջուր), հենց այդ ժամանակ թունելի խցանային փակմունէ խնդիրը առաջացավ: Ամենահատեսելի վիճակ էր մեզ համար: Բարեբախտաբար, որպեսզի առաջ էինք թունելից բանվորներին հանել եւ ոչ մի գոհ չունեցանք: Մեզ հաջողեց տեղի ունեցածի պատճառը գտնել եւ վերացնել…*

*Բայց շատերը սկզբնապես կարծում էին, թե ջրամբարի պատնեշն է վնասվել, ճաք տվել: Իրար էին խառնվել ոչ միայն Հայաստանի կոմկուսի կենտկոմում եւ Հայաստանի կառավարությունում, այլեւ Մոսկվայում, որտեղից հանձնաժողով ժամանեց Սիսիան: Խուճապ էր առաջացել Սիսիանում, ոմանք ասելոսեերի հիման վրա քաղաքի ափամերձ թաղամասերից բնակչությունը տարիանալու խնդիր էին դրել… Մինչդեռ, եթե նույնիսկ պատնեշը ճաք տար կամ քանդվեր, միեւնույն է, Սիսիան քաղաքին վնաս չէր լինի (հանձնաժողովն էր նման եզրակացության հանգել, ջրամբարում դեռեւս այդքան ջուր չէր կուտակվել):*

*Այդ մեկ շաբաթը, իսկապես, իմ կյան

**ԷԴԻԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ**
■ Գեներալ-լեյտենանտ, Սյունիքի մարզպետ 2000-2004թթ.

Լավրենտ Սարգսյանին ճանաչում եմ դեռեւս 1988 թվականից, երբ սրվեցին ազգամիջյան հարաբերությունները: Այդ տարիներին ես պաշտոնավարել եմ Կապանի ներքին գործերում, եղել բաժնի պետ եւ, բնականաբար, զբաղված եմ եղել նաեւ մեր պաշտպանության խնդիրների լուծմամբ: Լավրենտ Սարգսյանը որպես շինարար, բավականին մեծ աշխատանք է կատարել պաշտպանության նախարարության համար՝ կառուցելով կացարաններ, խրամատներ, պաշտպանական այլ կառույցներ, ինչի ականատեսն եմ եղել:

Հետագայում՝ 2000 թվականից, երբ նշանակվեցի Սյունիքի մարզպետ, իսկ Լավրենտը Սիսիանի քաղաքապետն էր, նրա հետ մեր հարաբերություններն ավելի ջերմացան:

Շատ բարի եւ հյուրասեր մարդ է: Ինքն իրեն բավարարված է զգում, երբ կարողանում է մի մարդու լավություն անել: Մեզք Սիսիանի քաղաքապետարանում ամիսը մեկ անգամ քաղաքացիների ընդունելությունն էինք կազմակերպում եւ փորձում բոլոր հնարավոր միջոցները ձեռնարկել, որպեսզի նույնիսկ մեկ քաղաքացի դժգոհ չհեռանա այդ հանդիպումից:

Քաղաքապետ եղած տարիներին Լավրենտ Սարգսյանը բավականին լուրջ աշխատանքներ է կատարել՝ նույնիսկ այն ժամանակվա շատ սուղ պայմաններում: Այն ժամանակ կառավարությունն այնպիսի մեծ գումար չէր տրամադրում, ինչպես հիմա է: Մարզպետարանին տրամադրվում էր 70-75 միլիոն դրամ, որով չնչին աշխատանքներ էին կատարվում, եւ հերթը հաճախ Սիսիանին չէր էլ հասնում: Լավրենտը շատ լավ շինարարական կազմակերպություն ուներ եւ կարողանում էր իր միջոցներով մեծամասշտաբ աշխատանքներ իրականացնել: Հիշում եմ, մի անգամ զանգ տվեցին, թե՝ համայնքներից մեկում հորդառատ անձրեւները կամուրջը քշել-տարել են եւ գյուղացիներին մեկուսացրել, զրկել Սիսիան մտնելու եւ ընդհանրապես այլ համայնքների հետ շփվելու հնարավորությունից: Ես խնդրեցի Լավրենտ Սարգսյանի օգնությունը: Մեկ օրվա մեջ կարողացավ իր հնարավորություններով կամուրջը վերականգնել: Եվ շատ-շատ նմանատիպ խնդիրներ են լուծվել նրա օգնությամբ:

Ես վստահաբար կարող եմ ասել, որ ինքը նորօրյա հայոց իրականության մեջ բավականին նկատելի ներդրում ունեցող մարդ է: Շինարարական մեծ ծավալի աշխատանքներ կատարած, Ղարաբաղյան գոյամարտում մեծ ներդրում ունեցող մարդ է, եւ ես իրավամբ նրան համարում եմ լավագույն սյունեցիներից մեկը:

■

**ՇՉՈՐՍ ԴԱՎԹՅԱՆ**
■ Բանասիրական գիտությունների դոկտոր

Սիսիանի տնտեսական ու սոցիալական զարգացման ասպարեզում հսկայական ներդրում ունի Լավրենտ Ավետի Սարգսյանը: Նա Որոտանի կասկադի շինարարությունում իր աշխատանքային գործունեությունը սկսեց որպես աշխղեկ: Նրան էր վստահվել Տաթեւի հիդրոկայանի օրվա կարգավորող ջրամբարի շինարարությունը, որն իրականացվում էր դժվարին պայմաններում: Այնուհետեւ ստանձնեց ավելի դժվարին պարտականություն՝ ամբողջ շինարարության երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրության գործը: 1975-ից արդեն Տաթեւի էկլիսմասային կառույցների շինվարչության պետն էր եւ առաջին սիսիանցին այդ պաշտոնում: Նա աշխատեց մինչեւ հիդրոհամակարգի շինարարության ավարտը, որը սկսվել էր դեռեւս 1961թ.: Այդ ժամանակ աշխատանքներն ընթանում էին մի քանի ճակատով՝ թունելների հորատանցում, ջրամբարների պատվարների կառուցում եւ հիդրոկայանների շինարարություն: Ըստ որում, Լավրենտ Սարգսյանին բաժին էր ընկել գործարկելու համակարգի ամենամեծ՝ Սպանդարյանի ջրամբարը, որը պիտի կուտակեր 276 միլիոն խորանարդ մետր ջուր, իսկ պատվարի բարձրությունն էլ 90 մետր էր՝ հողալից-քարի բարդ կառուցվածքով:

Սակայն Լավրենտ Սարգսյանի ամենամեծ ծառայությունն իր Ժողովրդին այն էր, որ սկսեց կատարել Սիսիանի դիմագիծը որոշող ուրիշ գործեր: Մի ամբողջ շարք կառույցների կողքին պիտի առանձնացնենք ամենակարեւորները: Նախ Սիսիանի օդանավակայանը: Նրա կառուցումը սխրանքի էր հավասար, որովհետեւ օդանավակայանը գտնվում էր քաղաքի ներսում, շրջապատվել էր նորակառույց շենքերով, իսկ թռիչքուղին էլ, բետոնապատ չլինելով, փոշու մեջ խեղդում էր քաղաքը:

Հանրապետության ղեկավարները չէին համաձայնում նոր օդանավակայան կառուցել, որովհետեւ ընդամենը 20կմ հեռու գործում էր Գորիսի օդանավակայանը: Հարկ եղավ Մոսկվայում վճռել այդ խնդիրը՝ որպես «հին օդանավակայանի կապիտալ վերանորոգում», սակայն քաղաքից դուրս, թռիչքային բացառիկ պայմաններ ունեցող մի հարթավայրում: Այդ գործը պետք է արվեր շատ արագ, քանի դեռ վերուելներում չէին «սթափվել»: Աշխատանքները ընթանում էին երկու ճակատով՝ օդանավակայանի շենք եւ թռիչքային դաշտ՝ երկու հերթափոխով: Գործն ավարտելուց հետո, սակայն, պարզվեց, որ «ՅԱԿ-40» ինքնաթիռի վայրէջքի համար ուղիղ պիտի երկարացվի եւս 600 մետրով: Իսկ գումարները արդեն սպառվել էին: Եվ այդ գործը Լավրենտ Սարգսյանը կատարեց իր անձնական պատասխանատվությամբ:

Երկրորդը Սիսիան քաղաքի ջրային հայելիների շինարարությունն էր՝ ափամրացման հետ միասին: Այն մոտ երկու կիլոմետր երկարությամբ, երեք հատվածից բաղկացած կասկադ է՝ Որոտան գետի ճախկին հուն վրա, մոտ չորս հազար գծամետր բետոնե պատերով եւ 4-5 մետր բարձրության բազալտասալիկային երեսպատմամբ: Այդպիսի գեղեցիկ կառույց Հայաստանում չկա:

Երրորդը Բռնակոթի ջրհան կայանն ու ոռոգման համակարգն է 800 հեկտարի վրա՝ երկու կարգավորիչ ջրամբարով, անձրեւացման համակարգով:

Չորրորդը մի ինքնատիպ կառույց է՝ հացատուն, որը կարծես թե քանդակված լինի մի հսկայական բազալտե քարից: Այն ուներ թոնրատուն, համտեսի սրահ եւ հացի ու հացահատիկի պատմության թանգարան:

Այս ամենին պետք է գումարել մի քանի դպրոցներ, մանկապարտեզների, տասնյակ հազարավոր քառակուսի մետր ընակելի տարածության շինարարությունը եւ, ցավոք, անավարտ մնացած Սիսիանի մաքրման կայանը, որը նույնպես իր տեսակի մեջ հանրապետությունում առաջինն էր լինելու:

Լավրենտ Սարգսյանի գործունեությունը շինարարությամբ չի ավարտվում: Նա երեք ընտրաշրջան անընդմեջ ընտրվեց Սիսիանի քաղաքապետ: Աշխատեց առանց ցնցումների հնարավորին չափ ընդառաջելով քաղաքի բնակիչներին դժվարին ու բարդ ժամանակներում: Չգտնեց, որ քաղաքը շենացնի ու բարեկարգի, որ քաղաքից ավելիակի հոտ չգա...

■

**ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ**
■ Գնդապետ, Գորիսի զինկոմ

Լավրենտ Սարգսյանին ճանաչել եմ 1992 թվականին: Երբ Լաչինի միջանցքը բացվել էր, Լավրենտը մի մեքենա սնունդ բարձած տարավ Ստեփանակերտ, բաժանեց ժողովրդին: Նման բայլեր հետո եւս ձեռնարկեց:

Երբ ինձ նշանակեցին Նորավանի գնդի հրամանատար, այդ ժամանակ Լավրենտը շինարարություն էր անում, մենք իրար հետ աշխատում էինք, որ գունդը դառնա ցուցադրական, այդ աշխատանքների 50 %-ը ձրի ենք արել, մի տեղից փայտ ենք բերել, մի գոմից՝ «ՊԿԺ», մի տեղից՝ խողովակ, եւ գունդը դարձրինք իրոք ցուցադրական: Սպարապետ Վազգեն Սարգսյանը հաճախ էր գալիս գունդ եւ, երբ տեսնում էր աշխատանքը, մաքրությունը, շատ էր ուրախանում ու գոհ մնում: Գնդում միշտ միջոցառում էինք անում, Լավրենտն էլ գնդին նվերներ էր տալիս՝ հեռուստացույց, մագնիտոֆոն... Մենք մի կոլեկտիվ էինք, միշտ իրար հետ էինք լինում, ընտանիքներով իրար տուն այցելում: Ինչ միջոցառում էլ որ լիներ, Սպարապետը միշտ նստում էր նրա կողքին եւ գոհունակություն արտահայտում կատարած աշխատանքի համար:

Լավրենտը հաճախ էր լինում ռազմաճակատի առաջին գծում, մի օր էլ գեներալ Խաչատուրովի հետ եկավ եւ գիշերը մնաց ինձ մոտ: Խաչատուրովն ասում էր, որ Լավրենտը բանակին շատ է օգնում, Գորիսի գումարտակի համար առաջին հագուստը զինվորներին Լավրենտն է տվել: Միշտ բանակի հետ է եղել...

Այսօր էլ Լավրենտ Սարգսյանի հետ լավ ընկերներ ենք, բարեկամներ:

Ծնունդդ շնորհավոր:

■

## Լուսանկարային դրվագներ

# Անցած ճանապարհ...

# Ամեն տարիքում էլ կարելի է բարի գործ կատարել

**ԱՇՈՏ ՄԻՆԱՍՅԱՆ**
■ Սյունիքի տարածաշրջանային մաքսատան պետ

Կարծես երեկ էր, սակայն անցել է արդեն երեսուն տարի: Ես աշխատում էի Արփա-Սեւան շինվարչության Շաղատի տեղամասում: Տեղամասը պետք է հանձնվեր Սպանդարյանհիկին: Մենք աշխատանքով զբաղված էինք, երբ մեզ մոտեցավ մի «Վոլգա» մեքենա: Մեքենայից իջավ մի բարձրահասակ մարդ, բարեւեց մեզ եւ սկսեց հարց ու փորձ անել աշխատանքից: Հարցրեց հերթով մեր ով լինելը, ժպտում էր յուրաքանչյուրի պատասխանից հետո ու շարունակում ներկայացնել յուրաքանչյուրիս նախնիներին ու տոհմը: Հեռանալուց հետո հարցրի՝ ո՞վ է այս մարդը, որ անգիր գիտի բոլորիս նախնիներին, տղաները պատասխանեցին, որ Լավրենտ Սարգսյանն է, ում մասին շատ էի լսել:

...Սկսվեց ազատագրական պայքարը: Լավրենտ Սարգսյանն այն եզակի ղեկավարներից էր, ով կանգնեց ազատամարտիկներիս կողքին: Նա ոչ միայն ֆինանսապես էր օգնում կազմավորվող ջոկատներին, այլ նաեւ տեխնիկայով ու արտահագուստով: Օգտագործում էր իր բոլոր կապերը՝ վերադաս օղակների մոտ, որ կարողանան Սիսիանի ջոկատներին հատկացնեն համապատասխան նյութեր, եւ անմիջապես իր ղեկավարած կազմակերպությունից ջոկատներին էր հատկացնում պայթուցիկ նյութեր՝ ինքնաշեն նռնակներ պատրաստելու համար: Ինչքան խորանում էր պատերազմը, այնքան մեծանում էր կապկ ազատամարտիկների եւ Լավրենտ Սարգսյանի միջեւ: Պարոն Սարգսյանը, իսկ ինձ համար մտերմիկ, Լար Ավետիչը, այն եզակի մարդկանցից է, ով հովանավորում էր մեզ զենք ձեռք բերելու՝ Սիսիանի եւ հարակից շրջանների պաշտպանության համար: Այն ազատամարտիկներին, ովքեր պատերազմի դաշտում ռազմական տեխնիկա էին խփում, պարգեւատրում էր բնակարաններով եւ խոշոր գումարներով:

1994թ. հունվար ամիսն էր: Ծանր մարտեր էին ընթանում Հորադիզի հատվածում: Սիսիանի զորամասերը, որոնք ընդգրկված էին Գորիսի բրիգադի կազմում, իմ հրամանատարությամբ գտնվում էին Հորադիզում: Ծանր օրեր էին, ոչ սնունդ էր հերիքում, ոչ ծխախոտը, ոչ էլ կարգին հագուստ ունենք: Մի օր ինձ հացի հրավիրեց Կապանի բրիգադի հրամանատար Միշա Գրիգորյանը: Ես զարմացած էի Կապանի տղաների լավ հագնված լինելուց եւ խոհանոցի առատությունից: Իմ հարցին՝ թե որտեղի՞ց այսքան սնունդ եւ այդքան գեղեցիկ հագուստ, Միշա Գրիգորյանը պատասխանեց, որ Կապանի ժողովուրդն է օգնում: Եես, «ճախաձնով» լցված, նույն օրը երեկոյան եկա Սիսիան եւ հանդիպեցի Լավրենտ Սարգսյանին ու Վիլիկ Ազոյանին: Խորհրդակցելուց հետո հավաքվեց հայրենասեր սիսիանցիների ավագների խորհուրդ, որի կազմում ընդգրկված էին Լավրենտ Սարգսյանը, Վիլիկ Ազոյանը, Ֆելիքս Գրիգորյանը, Էդիկ Վարդանյանը, Ստեփան Հայրապետյանը (Գեսիկ) եւ այլ մարդիկ, որոնց կոչով ամբողջ շրջանը մի մարդու պես հանդես եկավ՝ օգնելու ազատամարտիկներին: Երեք օր անց առաջին օգնության մեքենան հասավ Հորադիզ՝ բարձված սննդով, հագուստով եւ այն ամեն ինչով, որ մեզ պետք էր ռազմադաշտում: Սնունդն այնքան առատ էր դարձել, որ հաճախ տղաները կատակում էին, որ այստեղ ավելի լավ ենք ապրում, քան տանը, գնում ենք տնեցիներին էլ բերենք: Շաբաթը մեկ կամ երկու անգամ օգնության մեքենաները հասնում էին մեզ, եւ հաճախ Լավրենտ Սարգսյանն անձամբ էր գալիս ու տեղում ծանոթանում, թե ինչպես է բաժանվում սնունդը, թե ինչ է մեզ պետք, ճշտում, թե որ գիծվորն ինչ սխրագործություն է կատարել, եւ ինքն ինչ անձնական պարգեւատրում պետք է կատարի: Մի անգամ հերթական այցի ժամանակ, նա իր հետ բերել էր երկու դույլ մեղր եւ իր ձեռքով հանձնեց ինձ ու ասաց, որ լորեցի Հոկտիկն է ուղարկել անձամբ ինձ համար: Մենք ծիծաղեցինք, եւ Լար Ավետիչը ցանկություն հայտնեց առաջին գիծ գալ ու տեսնել իր աչքով ամբողջ մարտադաշտը: Մեքենայի մեջ նստած՝ մենք առաջին գծում դիրքից դիրք էինք գնում, ու նա ծանոթանում էր տղաների կատարածին: Թուրքերն անընդմեջ կրակում էին, եւ փամփուշտները զզվելոցով անցնում էին մեր մոտով: Երբ պարոն Սարգսյանին հարցրի՝ չի՞ վախենում, որ կարող ենք ականի վրա պայթել կամ զոհվել, պատասխանեց.

- Բայց չէ՞ որ կասեմ՝ հրամանատարի հետ եմ գոհվել:

Ահա այսպիսին է իմ ընկեր Լավրենտ Սարգսյանը:

Պատերազմի ավարտից հետո պարոն Սարգսյանն ընտրվեց Սիսիանի քաղաքապետ. սիսիանցին միահամուռ իր ձայնը տվեց ստեղծագործ մարդուն: Ես բազմիցս ականատես եմ եղել, թե նա ինչպես է օգնում իր անձնական միջոցներով բոլոր այն մարդկանց, ովքեր օգնության կարիք ունեն, եւ բարի ժպիտով ճանապարհում է գործերով, որ այսօր էլ մի բարի գործ կատարեց: Կարծես հաճույք է ստանում ուրիշին օգնելուց:

Անցել են տարիներ, եւ պարոն Սարգսյանը վերադարձել է այնտեղ, որտեղից սկսվել է իր մանկությունը: Վաղատնի գյուղից ներքեւ՝ Փիրիլու կոչվող տարածքում, մանկության եւ պատանեկության տարիներին ձեռքով ջուր կրել, իր ընկերների հետ ծիրանանոց էր ստեղծել, որը մեր տարածաշրջանի ամենահամեղ միրգն էր: Տեսնելով, որ ավերվել են շենքերը, եւ չորացել՝ այգիները, որտեղ հազար անգամ Համո Սահյանի հետ ժամանակ են անցկացրել, հետ է վերադարձել գյուղ, իր բնավորության համաձայն՝ վերակառուցել շենքերը, մաքրել ու տնկել նոր այգի, մեծացրել այգին եւ դարձրել որպտաղայր: Նա չի փախել իրականությունից, այլ գնացել է շենացնելու եւս մեկ փլված օջախ, եւս մեկ ավերված այգի, գնացել է ապացուցելու, որ ամեն տարիքում էլ արարողն արարում է: Գնացել է ապրելու այն հուշերով, որտեղ բազում անգամներ երիտասարդ տարիներին օրեր է անցկացրել Համո Սահյանի, Ռազմիկ Դավոյանի, Հրաման Մաթեւոսյանի, Սոս Սարգսյանի, Վլադիմիր Մովսիսյանի, Շչորս Դավթյանի, Վարդգես Պետրոսյանի, Մերուժան Տեր-Գուլանյանի, Վահագն Դավթյանի եւ այլոց հետ: Գնացել է մեր մեծերի անուններով իր ձեռքով տնկած ծառերով հավերժացնելու այդ մեծերի փառքը: Գնացել է սերուցնդերին ապացուցելու, որ ամեն տարիքում էլ կարելի է բարի գործ կատարել ու պահ տալ հավերժությանը:

■

## Ընտանիքը

# Կյանքի գործը՝ այցեքարտ

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ**

Լավրենտ Սարգսյանի հետ մեր ծանոթությունը, որ հետո վերածեց ամուր ընկերության, գալիս է Համո Սահյանից: Մեզ ծանոթացրեց Համո Սահյանը՝ այսպես ասած թագադրելով մեր ընկերությունը:

Լավրենտը սրտաբաց, պարզամիտ մարդ է, հավատարիմ ընկեր: Նա լավ գիտի լրագողի, գրողի ու հրապարակախոսի հետ հարաբերվելու եղանակները, գիտի անկեղծ ուրախանալ մի լավ գրվածքով, սրտանց շնորհավորել հեղինակին, եւ այս հարաբերության մեջ նա երբեւէ պահանջ կամ ցանկություն չի ներկայացրել, բացի անկեղծ շնորհավորանքից: Նա, ով Սյունիքում մի շարք կառույցների հեղինակ է, երբեւէ լրագրող ընկերներին չառաջարկեց գովազդել իր կատարած աշխատանքը: Նա չուներ ակնարկի հերոս դառնալու կարիք. նա իր գործն էր անում, իր կյանքի գործը:

Հետո եկավ Արցախյան պատերազմի շրջանը, եւ մենք բոլորովին ուրիշ մի Լավրենտ տեսանք. իր ղեկավարած շինարարական կազմակերպության ամբողջ ներուժն ուղղեց պաշտպանական կառույցների շինարարությանը՝ Լեռնային Ղարաբաղից սկսած մինչեւ Նախիջեւանի հետ մեր սահմանային գոտիները:

Իր աշխատանքային գործունեության տարիներին Լավրենտ Սարգսյանը պահպանեց իր ինքնուրույնությունը, երբեւէ չտրվեց քաղաքական որեւէ հոսանքի: Միսական աշխարհի բնակչությունը, վստահելով նրան եւ բարձր գնահատելով արժանիքները, երեք անգամ նրան ընտրեց Սիսիանի քաղաքապետ:

Սարգսյանի ապրած կյանքն իրական պատմություն է, անցած աշխատանքային ուղին՝ վաստակավոր շինարարի ճանապարհ՝ շատ նկատելի եւ օրինակելի գործունեության վավերագրերով, նրա բացած ճանապարհը՝ դյուրանցանելի: Մարդը պահում է իր անջնջելի ոտնահետքերը, որոնցով անսայթաք անցնում են նախ իր գերդաստանի զավակները, ապա եւ բոլոր նրանք, ում համար արդար ու ճվիրումով կատարած աշխատանքի օրինակն ընդունելի է:

Միսական աշխարհում շինարարական ծավալուն աշխատանքների տարեգրությունն է նրա կյանքի գործը. Սարգսյանն իր քառասունամյա շինարարական անընդմեջ գործունեության ընթացքում մշտապես եղել է կամ այդ վիթխարի աշխատանքներն անձամբ իրականացնողը, կամ էլ դրանց ակտիվ, անմիջական մասնակիցը: Հավուր պատշաճի են գնահատվել նրա մասնագիտական հմտություններն ու բարեխիղճ աշխատանքը. վկայությունը՝ պետական բարձր պարգեւներն ու խրախուսանքները:

Լավրենտ Սարգսյանի կենսագրության էջերում առանձնակի տեղ ունի մեծաճուն պոետ Համո Սահյանի հետ ունեցած իր մտերմությունը: Մտերմություն՝ այդ բառի բուն իմաստով: Սահյանի՝ Սիսիանում եղած ողջ ընթացքում միշտ նրա կողքին, նրա մերձավոր ընկերն ու ուղեկիցն է եղել: Մտերիմներից մտերիմն էր, բանաստեղծի գաղտնիքների տեր, նրա գրածների առաջին ընթերցող բախտավորը:

Դրանից է, երեւի, որ Լավրենտ Սարգսյանը տեր կանգնեց ծիրանուտի՝ անխնամ մնացած մի այգու, որտեղ եւ գողտրիկ հյուրատուն կառուցեց՝ ամռան, մանավանդ աշնան օրերին այդ այգի, այդ հյուրատուն հրավիրելով Սիսիան հանգստի եկած պոետին: Սարգսյանի համար սրբություն է այդ այգին. այնտեղ Համո Սահյանի հիշատակը կա, այդ այգում ինքը ժամանակին պոետի հետ հանդիպումների երջանիկ պահեր է անցկացրել, այդ այգում է նկարահանվել «Իրիկնահացի հրավեր» ֆիլմը՝ նվիրված Համո Սահյանին:

Երբ Համո Սահյանը հրաժեշտ տվեց երկրային կյանքին, Լավրենտ Սարգսյանն այդ տարածքը կոչեց Համո Սահյանի անվամբ՝ Սահյանածոր: Հյուրատան այն սենյակը, որտեղ հաճախ գիշերել է պոետը, հիմա սահյանական յուրօրինակ թանգարան է՝ ձեւավորված լուսանկարներով, Սահյանի օգտագործած իրերով:

Սարգսյանը Համո Սահյանին իր լեռնաճխարհում մշտապես տեղ տալու միջոցն էլ գտավ՝ թանգագործ Գեսիկ Բաղդասարյանին աջակցելով, որ վերջինս իր լրումին հասցնի պոետի քանդակը, որը Գեսիկի երեւանյան արվեստանոցից բերվեց Սիսիան: Այն տարիներին Լավրենտ Սարգսյանը նաեւ պատվիրեց «Համո Սահյան-90» գիրք-օրացույցը պատրաստել՝ պոետի կյանքին վերաբերող հանգամանալից տեղեկություններով, պոետի քնարերգության լավագույն նմուշներով:

■

# Վաղատին

**Այս հինավուրց գյուղը պատմական աղբյուրներից հայտնի է իր անվան 22 տարընթերցվածներով՝ Վաղուդի, Վաղադնի, Վաղանտի եւ այլն: Հնագույն հիշատակումը, թերեւս, Տաթեւի վանքի տասներորդդարյան հարկացուցակինն է, որում գյուղի հարկի չափը 12 է, հետեւաբար խոշոր գյուղ էր: Վաղնջական շրջանում մտնում էր Սյունիք աշխարհի Ծղուկ գավառի մեջ: Վաղատին հնավանդ անվանումն ի վերջո վերառել է 1991-ին: Ժողովրդական մի ստուգաբանությամբ Աղուդի եւ Վաղուդի հարեւան գյուղերի անունները հղվել են թշնամյաց դեմ քաջագործած նույնանուն եղբայրներին:**

Գյուղի աշխարհագրական տեղացույցներն են՝ արեւելյան երկայնության 46 աստ. 7 րոպ. 5 վրկ., հյուսիսային լայնության 39 աստ. 30 րոպ. 19 վրկ:

Բնակավայրը Որոտանի ձախ մասում է, մարզկենտրոն Կապանից 118 կմ հս-արմ, Սիսիանից մոտ 14 կմ հր-արլ: Ծովի մակերեւույթից ունի 1580 մ միջին բարձրություն: Տեղանքը հս-արլ-ից երիզված է գեղատեսիլ գոգավորությամբ ու շուրջկալված՝ պտղատու ծառաստաններով: Սյունիքի ջրառատ անկյուններից է: Ուշագրավ է, որ՝ ի թիվս մեր մարզի մի քանի վայրերի, այստեղ քննություն է բռնում Կարմիր գրքում գրանցված՝ բուսաշխարհի թագուհի նեղգծային հիրիկը, աճելավայրը դարձնելով մարզի ֆլորիստական հոգածության օջախ:

Վաղատինը, աներկբայորեն, միջնադարում վերածնունդ ապրած մեր երկրամասի համբավավոր օրրաններից է՝ գրչության կենտրոն: Վաղատնի վանքը, որ հետագայում վերառել է Որոտնավանք անվանումը, Սյունիքի թագավորության շրջանում հայտնի էր հոգեւոր-կրթամշակութային առաքելությամբ: Մեր պատմիչ Հայր Ստեփանոսը կարծիք է հայտնել, որ վանական համալիրի Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հիմնադրել է հենց ինքը՝ Լուսավորիչը: Շահանդուխտ թագուհին կառուցել է Սբ Ստեփանոս-նախավկա եկեղեցին (1000թ.), նրա կրտսեր որդի Սեւադան՝ Սբ Կարապետ եկեղեցին (1006թ.): Որոտնավանքը գյուղին գրեթե առընթեր է՝ 2 կմ հր-արլ, գործել է մինչեւ 20-րդ դարի սկիզբը:

Վաղատինը դարերի հոլովույթում երեւելի շատ անհատներ է ունեցել, ընդհուպ մինչեւ մեր ժամանակները: Այստեղ է ծնվել փիլիսոփա, աստվածաբան Հովհան Որոտնեցի Կախիկը (1315-1388), ում գիտական գործունեությունը հայոց պատմության մեջ բացառիկ է: Երանելին Տաթեւի արեգակնափայլ վարդապետարան-համալսարանի հիմնադիրն է: Որոտնավանքում գործել է նաեւ եռամեծար Գրիգոր Տաթեւացին, ով Կախիկից հետո ղեկավարեց Տաթեւի համալսարանը:

Վաղատին բնակավայրի հնավայրերը սակավ պեղված են: Գյուղի տարածքում, մերձակա Զորզորի, Մոխրաղբյուրի, միջնադարյան կամրջի հանդերում կան խաչքարեր ու պատմամշակութային այլ արժեքների նմուշներ, որոնցից թվով 64-ը 2002թ. հաշվառված են ՀՀ կառավարության կողմից:

**ՌՈԲԵՐՏ ԷՋԱՆԱՆՑԻ**

# ԼԱՎՐԵՆՏ ՍԱՐԳՍՅԱՆ. «Համո Սահյանի հետ բարեկամությունը կյանքիս ամենամեծ պարգեւն է»

ՍԿԻԶԲԸ՝ ԷՋ 3

յի եւ վաղվա օրվա մասին բանաստեղծի դատողություններով, մեկնություններով, նրա բանաստեղծություններով, որ ընթերցում է հեղինակը:

Հետագայում Հովհ.Պապիկյանը խոստովանել է. *«Լավրենտ, եթե չլինեիր դու, այդ ֆիլմը չէր հաջողվելու նկարել»:* Նշենք, որ Հովհ.Պապիկյանը 2004-ին եւս մի տեսաֆիլմ է նկարահանել. *«Իրիկնահաց առանց Համո Սահյանի»:*

Լավրենտ Սարգսյանին Համո Սահյանն ասում էր, թե երկու մարդ գիտի իր գաղտնիքները, մեկը՝ ինքը, մյուսը՝ Ալեքսան Կիրակոսյանը: Ալեքսան Մատվեյիչը տեղյակ էր Սահյանի պետական պաշտոնյաների հետ շփումների գաղտնիքներից, Լ. Սարգսյանը՝ անձնականից: *«Ինքը քիչ էր խոսում, ամեն ժամանակ չէիր կարող լսել նրան, հազվադեպ էր «բացվում», բայց, երբ խոսում էր, միայն հետաքրքրությամբ էիր լսում նրան»,* – շարունակում էր պատմել Լավրենտ Սարգսյանը, – *աշխատանքից հետո այցելեցի նրան, հյուրանոցում էր: Այս անգամ «բացվել» էր, Պարույր Սեւակի մահվան եղելությունն էր պատմում: Աշխատանքային լարված օրվանից հետո հոգնածություն էի զգում, պատմության կեսին նինջ եկավ աչքերիս: Նեղացավ. «Ես քեզ համար եմ պատմում, դու էլ ննջում ես: Հետո փորձեց մեղմել իրադրությունը՝ ասելով՝ ուրեմն հոգնած ես: Մարդիկ կային, գալիս խոսում, խոսում, մի պատասխան չէր տալիս: Ուրեմն զրուցակիցը սրտովը չէր…»:*

Հարգում էր իր սերնդակից գրողներին. Հովհաննես Շիրազին, Վահագն Դավթյանին, Պարույր Սեւակին, ում հետ նույն շենքում էր բնակվում: Սեւակի մասին այսպես է արտահայտվել. *«Պարույր, դու շուտ գնացիր, բայց ճամփա բացեցիր, որ քո գործը շարունակենք»:* Համեմատաբար երիտասարդներից ընդունում եւ հարգում էր Հրանտ Մաթեւոսյանին եւ Ռազմիկ Դավոյանին: Վերջինս նրան հայրիկ էր անվանում: Իսկ միջակների առնչությամբ լռում էր եւ իր վերաբերմունքն արտահայտում էր ձեռքը թափ տալով:

Լավրենտ Սարգսյանի արխիվում Փիրիլուի ծիրանի այգում արված մի լուսանկար կա, որն ունի իր նախապատմությունը: Բանն այն է, որ այդ անգամ բանաստեղծն ասել էր. *«Լավրենտ, արի, վերջին անգամ լուսանկարվենք»:* Եվ, իրոք, դա վերջին լուսանկարն էր…

Ղարաբաղյան շարժման տարիներին Համո Սահյանը չմտավ քաղաքականության մեջ, ինչպես Սերո Խանզադյանը, բայց հանդես եկավ հոդվածներով, որոնցում շոշափվում է նաեւ հայ-ռուսական հարաբերությունների հարցը: «Ինձ բացակա չդնեք» ժողովածուի մեկ տասնյակից ավելի բանաստեղծությունում շոշափվում են ղարաբաղյան թեմաներ: Դրանցում նաեւ լավատեսական տողեր կան.

***Մենք ապրելու ենք, ինչ էլ պատահի,***
***Մեր հողի վրա, մերն ենք լինելու…***

Շուշիի ազատագրումը ցնծությամբ ընդունեց բանաստեղծը: Ասաց, որ ինքը կենդանի չի լինի, սակայն Ղարաբաղը մշտապես կլինի հայկական: Բանաստեղծը, ըստ Լավրենտ Սարգսյանի, ռուսական կողմնորոշում ուներ, ինչն այսպես էր ձեւակերպում. *«Մենք պիտի ռուսի հետ լինենք»:*

Լավրենտ Սարգսյանի փոխանցմամբ՝ Համո Սահյանն ասել է, որ իրեն հողին հանձնեն ծննդավայրում՝ Լոր գյուղում, հայրենական տան բակում: Երբ վախճանվեց բանաստեղծը, թաղման կառավարական հանձնաժողով էր ստեղծվել՝ Վանո Սիրադեղյանի գլխավորությամբ: Համո Սահյանի ցանկությանը Լավրենտ Սարգսյանը տեղյակ պահեց հանձնաժողովի նախագահին: Վերջինս էլ հայտնեց, որ որոշվել է բանաստեղծի դին ամփոփել Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում, ինչը եւ տեղի ունեցավ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**
**«Սյունյաց երկիր», N314**

Սյունյաց երկիր
Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԻՄՆԱԴՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՈՂ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռախոս՝ (0285) 5 25 63,
(091) 45 90 47,
(077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am
Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:
Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):
«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:
® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 11.02.2015թ.: